



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

22 փետրվարի 2016 թ. № 32 - Ա/1  
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ»,  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ» ԵՎ  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ»  
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՄՆԵՐԻ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ժ.1» կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ» 2016 թվականի հանրապետական ստուգատեսի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն քաղաքային մարզական համայնք» 2016 թվականի հանրապետական ստուգատեսի կանոնակարգը՝ համաձայն № 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն գյուղական մարզական համայնք» 2016 թվականի հանրապետական ստուգատեսի կանոնակարգը՝ համաձայն № 3 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ» 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ» հանրապետական ստուգատեսի (այսուհետ՝ Ստուգատես) նպատակներն են՝

1) ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների բարելավում.

2) բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ ապրելակերպի ձևավորում:

2. Ստուգատեսի խնդիրներն են՝

1) բակերում ընդհանուր ֆիզիկական պատրաստականության և առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների՝ պարզ տիպի խաղահրապարակների և խաղասենյակների ստեղծում, դրանց արդյունավետ օգտագործում.

2) բնակչության, մասնավորապես նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում:

2. ԺԱՄԿԵՏԸ

3. Ստուգատեսն անցկացվում է երկու փուլով՝

1) մարզային և Երևանի քաղաքային փուլ՝ սեպտեմբեր ամսին.

2) հանրապետական փուլ՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Ստուգատեսի անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են՝

1) 1-ին փուլում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից ստեղծված հանձնաժողովները.

2) հանրապետական փուլում՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ստեղծված հանձնաժողովը:



#### 4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Ստուգատեսին մասնակցում են Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների բակերը:

6. Ստուգատեսում հաղթող բակը որոշվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

1) խաղահրապարակների, մարզահրապարակների, խաղասենյակների կամ հանգստի տաղավարների առկայությունը.

2) պարզ տիպի մարզասարքերի (տարբեր բարձրության պտտածողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցելու և ձգումներ կատարելու հարմարանքներ, սարքեր և այլն), ավազահրապարակների, ցատկափոսերի և այլնի առկայությունն ու դրանց վիճակը.

3) մարզագույքով ապահովվածությունը, բնակչության հանգստի անցկացման համար այլ պայմանների առկայությունը.

4) բակի տարածքի ընդհանուր սանիտարահիգիենիկ պայմաններն ու կանաչապատվածությունը.

5) բակի տարածքում մասսայական ֆիզկուլտուրան և սպորտը, առողջ ապրելակերպը քարոզող միջոցների (ազդանկարներ՝ պլակատ, վահանակներ և այլն) առկայությունը:

7. Ստուգատեսին կարող են մասնակցել միայն համայնքում նոր կառուցված և հիմնովին վերանորոգված մարզական բակերը: Մրցանակային տեղեր զբաղեցրած բակերը հաջորդ մասնակցության դեպքում կարող են հանդես գալ միայն նոր ձեռքբերումներով:

#### 5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

8. Հայաստանի Հանրապետությունում մրցանակային տեղեր գրաված մարզական բակերը պարգևատրվում են վկայագրերով և համապատասխանաբար 1000.0 հազար (մեկ միլիոն), 600.0 հազար (վեց հարյուր հազար) և 400.0 հազար (չորս հարյուր հազար) դրամ դրամական մրցանակներով:

9. Պարգևատրման գումարները պետք է օգտագործվեն համայնքի մարզակառույցների վերանորոգման, բարեկարգման և անհրաժեշտ մարզագույքի ձեռքբերման նպատակով: Ընդ որում, անհրաժեշտ է կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Նախարարություն մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբեր ամիսը:

#### 6. ՀԱՅՏԵՐԸ

10. Քաղաքապետարանները, Երևանի վարչական շրջանները իրենց լավագույն մարզական բակերի հայտերը (Ձև 1) ներկայացնում են մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի համապատասխան հանձնաժողովներին մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբերի 10-ը:

11. Մարզպետարանները մեկական (Ձև 2), իսկ Երևանի քաղաքապետարանը երեք լավագույն բակերի հայտերը (Ձև 3) ներկայացնում են Նախարարություն մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբերի 15-ը: Հայտերի հետ ներկայացվում են նաև




լավագույն մարզական բակ(եր)ի համայնապատկերային լուսանկարը, տեսահոլովակ և բակի ու կատարված աշխատանքի նկարագիրը՝ հաստատված քաղաքապետի կողմից:

## 7. ԾԱԽՍԵՐԸ

12. Ստուգատեսում մրցանակային տեղեր գրաված մարզական բակերին դրամական պարգևների վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

13. Ստուգատեսի արդյունքների ամփոփման հանրապետական հանձնաժողովի անդամներին Հայաստանի Հանրապետության մարզեր գործուղելու ծախսերը կատարում են Հայաստանի Հանրապետության այն պետական մարմինները, որոնց ներկայացուցիչներն ընդգրկված են հանձնաժողովի կազմում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ